Զարմանալի զուգադիպութիւն իմն արդարեւ, զի անմահն Թադիադեան որ երբեմն ի Կ. Պոլսոյ ինդրէրն զայն Աւետարան փոքր զմտաւ ածէր յայնժամ թէ հռաւակ ուրեմն յեղծեալբուրն Կոստանդիանոսի գնայր բազմարկածեան Աւետարանն այն՝ որ անցեալ էր ընդ հուր (Շահ Աբբասայ) և ընդ ջուր (Երասխայ) և անվտանգ հանեալ ի նաւահանգիստն խաղաղութեան, ի ցանկալի ծննդավայրն իմ ի ՆՈՐ ՋՈՒՂԱ։

ՄԵՍՐՈՊԸ Ց. ՄԼԹԵԱՆՑ

Նոր-Ջուղա՝ յամին 1853։ գնեմ բազմաթիւ զբաղչաիր գրեանս, ըստ մեծի մասին Աւետարանս, որպէս պատմէրն ինձ հանգուցեալ հայր իմ որ ի մասոյ ճանաչէին գնս, զի Ներմաղանեան լեալ էր մտերիմ բարեկամ Թադիադեանի, անդ ի Դաւրէժ (1834–1838) զարմէ տեռ ի «կենսագրութեան Մեսրովբայ Դաւթեան Թադիադեանց երեւանցւոյ» հաւաքեալ և խմբագրեալ ի Տէր Յովհաննէս Հայկազեան Աւագ Քահանայէն Մկրտեան որ ի Բերա Կ. Պոլսոյ (1884)։

Զանհնարին կորստենէ իւրոյ յաւէտ ճոխ մատենադարանին ի Տփղիս, Ներմաղանեան ի Յուսալեմի անդ իւրոյ հմտալից «երեւելի Հայ-«կազունք ի Պարսկաստան» երկասիրութենն զոհ այսպէս։ «Այն ինչ ձեռնամուխ եղայ կոչ-«զի բերել ժողոված նիւթերն, և ահա 1863 «ամի Յունիսի ամսոյ 28–29 օրը կէսօրին, մէկ «անկունեալի արկածք իմ հարուստ գրչա-«գիր և տպեալ գրքատունս և երեսուն ամեայ «աշխատութիւնս և ծրագրութիւններ ։ բաց ի «քանի մի տետրակներից և յիշատակարաններ. «ըստ, զոհ եղան ոմանց անբարեմիտ մարդկանց «անզգուսպ կրից»։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ

Լեհման և Պեյք հնախոյզներբ վաստրակաւոր մէջ պնդումներին զտնուած հնաբեանց տարին հրատարակած են նոր տեղեկագիրներ, որոնց թարգմանութիւնը «Բազմավէպ»ի 10ոդ պրակով կը սկսինք։

ԱՐԵՒԵԼՅԻ ՆԿԱՐՉԻ ՀԻԱՍԹԱՓՈՒԹԻՒՆԸ

Կ. ԱԲԴԻԶ Սէյիդ Հարիրը շատ եռանդով շարժում էր վրձինը իւր առաջ կախուած պատատոի վերայ և կենդանացնում հարիւր տարի առաջ սպանուած շահ Իսմայիլին։ Նկարչին եռանդ և ոգեւորութիւն էր ներշնչում ոչ թէ միայն այն գաղափարը, որ տաղանդը և երեւակայութիւնը պատկերացնում, կենդանանում է այլ առաւելապէս այն, որ շուտով բաւականին դրամ կստանայ և գոնէ մի քանի օր եւս կը թեթեւացնէ իւր բազմանդամ ընտանիքի թշուառութիւնը։

Ցարին շատ սակաւաթիւ էր, թանդ՝ կենդանական ամենուն անհրաժեշտ նիւթերը և, ի լրումն թշուառութեան, աշխատանքը լաւ չէր վարձատրուում։ Մթերքների թանգութիւնը ոչ միայն բնական էր, այլ և արհեստական։ Պարսկաստանում կալուածատէրերը շտեմարանել էին մեծաքանակ ցորեն, յոյս ունենալով աւելի բարձր գնահատութեան, չէին վաճառում։

Աշխէն շորրորդ օրն էր, որ նկարիչը սկսել էր իւր գործը. հաստատ հաւատացած լինելով, որ նկարի պատուիրողը պիտի լաւ վարձատրի իրեն, մի փոքրիկ դումար էլ պարտք էր առել, որ համ մի քիչ լաւ սնունդ ստանայ, համ էլ ուտելու հոգից ազատ ամբողջովին նուիրուի իւր սիրած գործին։

Ցարզ–աբի խանը նկարը պատուիրելուց՝ ապահովացրեց լաւ վարձատրութիւնը և խնդրեց նկարչին ոչ մի ճիգ ու ջանք չխնայել պատկերը խնկատիպ անելու համար։

Աշխատանքը տեւեց 10 օր։ Գիշերներն անգամ խեղճը մտածում ու հսկում էր, որ պատկերը, որքան կարելի է, լաւ լինի։ Ցառաւերորդ օրն էր. նկարիչը վար դրած վրձինը և հրծուալի հայեացքով դիտում էր իւր աշխատութեանց և աշխատանքի արդիւնքը. նորա հիացմունքը չափ չունէր։ Շահ Իսմայիլը նստած է ապաստազարդ գահի վերայ։

digitised by A.R.A.R.@

գլուխը վեհ. բարձրայօն աչքերը խոշոր և սեւ, մօրուքն ու ընչացքները թաւ և երկայն, գլխին ունի արքայական ճառագայթանշանակ թագ. ոսկեսակուռ երախակալով ու պատեանով կեռ թուրը դրել է ծնկներին և երկու ձեռքով բռնել, շապիկը սպիտակ է և կողմնակոն կոճակով, ծիրանեգոյն արիալուխի վերայ հագել է թանգագին շալէ ջուբբա և կարմիր ռանդաչները դրուած են գահի պառաւնակաթի վերայ։

— Վերջապէս կարող ենք մի քանի օր էլ լաւ կեսկերուել, բացականչեց նկարիչը, և այնուհետեւ Աստուած ողորմած է, երեւի մի բարի մարդ էլ կը գտնուի և մի ուրիշ պատուէր կը տայ։

Նկարիչը հոգաւ երկայն վերնագեստը, որով ծածկուած էր իւր աղքատիկ հագուստները, առաւ նկարը, խնամքով ծածկեց և տարաւ Փարզ—ալի խանին։ Նկարիչը ներս հրամցուեց, նկարի ծածկոցը յետ տրաւ և ներկայացրեց խանին։ Խանը զմայլած նայեց նկարը, յայտնեց իւր գոհունակութիւնը, որ պատկերը իւր սպասածից շատ լաւ է։ Նկարիչը ուրախացաւ, որ վերջապէս իւր նկարը գնահատուեց։

Խանը կանչից իւր գանձապահին և հրամայեց տալ նկարչին երկու թուման (10 ֆր.)։ Նկարիչը, լսելով 2 թումանի վարձատրութեան մասին, սարսափեց շլմեց և անզգայացաւ մի բոպէ։ Փողը մնաց գանձապահի ձեռքին, իսկ նկարիչը յաղագս կրթած նայում էր խանի երեսն ի վեր։

— Ինչ, միթէ զժգոհ ես վարձատրութեան համար. զմայմակած ու բարկացած հարցրեց խանը։

— կատակ էք անում, խան, թէ ծաղրում էք ինձ, պատասխանեց նկարիչը։

— Բաւ լինի, ինչու պիտի ծաղրեմ, չես տեսնում, որ ասոլրտակն գնից ուելի եմ վճարում մի նկարի, որ խանութներում 2—3 ղուռուշով (մի ֆրանք կամ 1,50 ֆր.) կարելի է ձեռք բերել, ահա էլ շրջանափակ։

— Բայց սա նկարուած է և ոչ թէ տպած, սրա համար մի կէսաթ վերայ թափել եմ աչքիս լոյսը, մաքիս ուժը և սրտիս կարողը, տասն օր չարուտակ գիշեր ու ցերեկ, մնացել ու հոգացել եմ սրա համար, մեծ երկուքով եմ ծնել, տասն օր պարտքով եմ կերակրուել և ձեր՝ տուածի եռապատիկը միմիայն ցանկ հացի եմ տուել ընտանիքս քաղցից ազատելու համար։

— Քաղմ, ուելացրու 5 դուռուշ էլ։ Բայց չաւ խմանաս, որ ուելի վճարում եմ, թ նկատի ունենալով, որ ընտանիք ունիս և տարին թանգ է։

Նկարչի գէմքը կատաղութիւնից շիկնեց, աչքերը լցուեցան արիւնով, երեսի մկանները ձգձգուեցան, լեզուն կարկամեց և ականջները խլացան։ Նորա աչքերը անպիտակցաբար ու կատաղութեամբ արագ դառնում էին մերթ նկարի և մերթ խանի վերայ։ Մի վայրկեանից յետոյ ուշաբերուեց, տեսաւ իրան յուսախաբուած, արուեստը անարգուած ու արհամարհուած։ Ամոգութեամբ խլեց նկարը խանի ձեռքից, կտոր կտոր արաւ իւր ամենքան հոգածութեամբ ու խնամքով շինած գործը. չաւ համարելով ոչնչացնել, քան թէ տեսնել այդպէս ստոր կերպով անարգուած։ Զայրոյթով դուրս փախաւ խանի տնից, հասաւ տուն և երեսի վերայ ընկնելով հեկեկաց . . . ։

Վ. Բ.

Թարգմ. 1901.

ՆԱՄԱԿԱՆԻ

ԳՈՍՏՈՎ.— ՄԵՍԹ. Գ. ՑՈՎԷ. ԳԱԼԵՍԱՆՑ.— Ուխտիս երկերիւրամեայ հաստատութեան հանդիսին համար՝ պատուական քաժանորդիդ յղած 500 ֆր.ի նուէրն ընդունեցանք և յանձնեցինք յոբելեանիս յանձնաժողովին։ Այս առթիւ հրապարակաւ ընդունեցէք մեր խորին շնորհակալութիւնը։ Յանձնաժողովն կը ստանաք առանձին պաշտօնական գրութիւն մը։ Ձեր զգայուն և անկեղծ արտայայտութեանց համար ընդունեցեք նոյնպէս խմբագրութեանս շնորհակալիքն։

ԵՐՈՒՍԱՂԷՄ.— ՄԵՍԹ. Գ. Տ. ՄԵՍՐ.— Ծաղկեզարդական և չնչիչ է Ձեր վերջին յղածուածն՝ որ պակաս թերթիս ուղղութենէն դուրս ըլլալով. կը ցաւինք որ չենք կարող հրատարակել։

ԵՐՕԹՍԱՂԷՄ.— Գր. Պ. ԳԱԼՈՅԱՆ.— Ընդունեցինք Ձեր ուղարկածներն։

ՓԱՐԻԶ.— «ՐԱՆԱՍԷՐ Գ.».— Ֆրանսոյ պատրաստեն՝ կը տեսնենք 10րդ. գրակին մէջ։

digitised by A.R.A.R.@